ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հուլիսի 24-27-ը Վրաստան / Թբիլիսի / կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան (Թբիլիսի), 2024 թվականի հուլիսի 24-27-ը

3. Հրավիրող կողմը՝

Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակ (Գեոստատ), ՄԱԿ-ի գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց (ՄԱԿ Կանայք)

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել ՄԱԿ Կանայք կառույցի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի և ՄԱԿ Կանայք Վրաստանի տարածաշրջանային գրասենյակների համագործակցությամբ, ինչպես նաև Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և ՄԱԿ Կանանց «Յուրաքանչյուր կնոջ և աղջկա ներուժի իրացում» առաջատար ծրագրի «Գենդերային վիճակագրության միջոցով ներառական զարգացման առաջընթացի արագացում» թեմայով տարածաշրջանային համաժողովին:

Մասնակցել նաև Վրաստանի ազգային վիճակագրության գրասենյակի 105-ամյա հոբելյանին նվիրված պաշտոնական ընդունելությանը:

5. Քննարկված թեմաները՝

Երկօրյա համաժողովի շրջանակում ներկայացվել են գենդերային վիճակագրության յոթ թեմատիկ ոլորտներ, որոնց շրջանակում քննարկվել են առանցքային համարվող հետևյալ հարցերը. սեռով տարանջատված տվյալների հավաքման և օգտագործման ազգային ռազմավարություններ ու փորձառություններ՝ հօգուտ լավարկված քաղաքականության մշակման, սեռով տարանջատված տվյալների մանրամասնեցման անհրաժեշտությունը՝ անտեսված չթողնելու և ոչ մեկին, դրանց տարածումը՝ որպես արդյունավետ հաղորդակցության միջոց, Ժամանակի օգտագործման հետազոտություններ (ԺՕՀ). խնամքի տնտեսության և սեռերի անհավասարության վերաբերյալ պատկերացումներ, Վաստակի կառուցվածքի հետազոտություն. մարտահրավերներ և հնարավորություններ, տվյալների դերը կանանց նկատմամբ բռնության վերհանման հարցերում, սեռերի հավասարության համաթիվ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաժողովին ելույթներով և թեմատիկ ներկայացումներով հանդես եկան ԵՄ անդամ և թեկնածու պետությունների, Արևելյան գործընկերության, Արևմտյան Բալկանների,

Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների ազգային վիճակագրական ծառայությունների գլխավոր վիճակագիրները, գենդերային վիճակագրության հարցերով պատասխանատուները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և փորձագետներ:

ՄԱԿ Կանայք-ի գլխավոր գրասենյակի հետազոտությունների և տվյալների գծով տնօրենը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի և Եվրոպայի տարածաշրջանի ՄԱԿ Կանայք-ի տարածաշրջանային տնօրենը պաշտոնական վիճակագրական համակարգերում գենդերային վիճակագրության առաջմղման գործում կարևորեցին երկրների ազգային վիճակագրական գրասենյակների միջև փորձի փոխանակումն ու առաջնորդությունը, միջազգային կազմակերպությունների հետ շարունակական ակտիվ համագործակցությունը:

Համաժողովի շրջանակում Հայաստանի պատվիրակությունը ևս հանդես եկավ թեմատիկ երկու շնորհանդեսներով՝ «Հայաստան. Ժամանակի օգտագործման 2023-2024թթ. հետազոտության մարտահրավերները և հնարավորությունները» և «Աշխատուժի տվյալների ուսումնասիրություն՝ գնահատելու վարձատրության գենդերային տարբերությունները. մեթոդաբանությունը և հիմնական արդյունքները՝ համառոտ»: Ներկայացվեցին միջազգային մեթոդաբանությամբ իրականացված ԺՕՀ և վարձատրության գենդերային խզվածքի ցուցանիշի գնահատման հայաստանյան առանձնահատկությունները, քաղած դասերը, հետագա անելիքները և զարգացման հեռանկարները: Ելույթի շրջանակում նշվեց նաև, որ 2024 թվականին Արմստատը ևս բոլորել է գենդերային վիճակագրության 25-ամյակը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի եզրափակիչ նիստում ևս մեկ անգամ կարևորվեց գենդերային վիճակագրության ոլորտում փորձի և առաջընթացի տարբեր մակարդակ ունեցող երկրների միջև համագործակցության խորացման անհրաժեշտությունը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակական դարձնել գենդերային վիճակագրության բնագավառում թեմատիկ միջոցառումների իրականացումը, ինչը կարևոր է կյանքի տարբեր փուլերում և ասպարեզներում կանանց և տղամարդկանց հնարավորությունների իրացման մակարդակը բնութագրող արդիական վիճակագրության վարման համար՝ ազգային մակարդակում, և արտադրվող վիճակագրության համադրելիության՝ միջազգային մակարդակում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Թեմային առնչվող ներկայացումները հնարավորություն ընձեռեցին ծանոթանալ տարբեր երկրների և տարածաշրջանների գենդերային վիճակագրության միջազգային համադրելիության և բարելավման հաջողված փորձերին ու փորձառություններին:

Համաժողովին մասնակցությունը ներդրում կլինի միջազգային մակարդակով գենդերային վիճակագրության գործիքակազմի և մեթոդների ներդաշնակեցման, բազմաչափ ցուցանիշների ընդգրկման և ներկայացման ձևաչափի կատարելագործման գործում: Այն կնպաստի միջազգային մեթոդաբանությանը և առաջավոր փորձին համապատասխան գենդերային վիճակագրական ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքման, վերլուծության, ներկայացման և տարածման ազգային գործընթացին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ՝ Ս. Մնացականյան

31. 07. 24թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը- ՀՀ վարչապետի 22.07.2024թ. թիվ 689-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

   ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ստեփան Մնացականյան
4. Գործուղման վայրը- Թբիլիսի (Վրաստան)
5. Գործուղման ժամկետները՝ հուլիսի 24-27, 2024թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՄԱԿ-ի գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց (ՄԱԿ Կանայք)

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը- ՄԱԿ Կանայք (թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն 1	Անուն, ազգանուն 2	Անուն, ազգանուն 3	Անուն, ազգանուն ...	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա.Հայրապետյան